ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«12» նոյեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 5/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 25 (քսանհինգ) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Մ.Սահակյանը, Վ.Հունանյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ռ.Սարգսյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ք.Մկրտչյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՀԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամներ Վահան Հունանյանը և Արման Գրիգորյանը չեն մասնակցել քվեարկության ուշ ներկայանալու պատճառով:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 12-ի հինգերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամներ Քրիստինա Մկրտչյանը և Արման Գրիգորյանը չեն մասնակցել քվեարկությանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 153-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «3 385 817 800 (երեք միլիարդ երեք հարյուր ութսունհինգ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 420 168 600(երեք միլիարդ չորս հարյուր քսան միլիոն հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր)» թվով և բառերով,
   2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3 510 565 800 (երեք միլիարդ հինգ հարյուր տաս միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 544 916 500 (երեք միլիարդ հինգ հարյուր քառասունչորս միլիոն ինը հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր)» թվով և բառերով:
2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4 հավելվածների:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N 119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը չի մասնակցել քվեարկությանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը սահմանելու մասին» N 119-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի (այսուհետ՝ Կարգ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «50.000 (հիսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «300.000 (երեք հարյուր հազար)» թվով և բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը չի մասնակցել քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 2 (երկու) կազմակերպություններին, որպես սուբսիդիա, հատկացնել 1.015.000 (մեկ միլիոն տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքերի ընթացիկ նորոգման, անհրաժեշտ գույքի ձեռքբերման և այլ ծախսերի համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4511) «Սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը չի մասնակցել քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 2 (երկու) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, որպես նվիրատվություն, հատկացնել 777 000 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքերի և գույքի պահպանության ապահովման նպատակով անվտանգության ազդանշանային համակարգ տեղադրելու և ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՎԱՐՍԻԿ ՍՈԼԱԽՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վարսիկ Սոլախյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Անահիտ Պետրոսյանին, որպես դրամական օգնություն, հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արմինե Հարոյանին, որպես դրամական օգնություն, հատկացնել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն), որպես նվիրատվություն, հատկացնել 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, հրաձգության համար անհրաժեշտ մասնագիտական մարզաբաճկոն ձեռք բերելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

10. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ» ԳՐՔԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը չի մասնակցել քվեարկությանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի գրողների միության վարչությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 1.300.500 (մեկ միլիոն երեք հարյուր հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ավետիք Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածու» գրքի 6-րդ հատորի տպագրման ծախսերը հոգալու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի

հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

11. ՍՊԻՏԱԿԻ ԱՂԵՏԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 30-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սպիտակի աղետալի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ «Վերածնունդ» խորագրով միջոցառման կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 1 198 500 (մեկ միլիոն հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Անդամ Արման Գրիգորյանը չի մասնակցել քվեարկությանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՓՈՂՈՑ N 15/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ք.Մկրտչյան, Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04102018-08-0041 վկայական) Ներսես Շնորհալու փողոց N 15/2 հասցեի 55,41 (հիսունհինգ ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0611-0007 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.00692 (զրո ամբողջ վեց հարյուր իննսուներկու հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Ելնելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2018 թվականի օգոստոսի 20-ի N 08201811 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունից՝ հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 70-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 1-ին տողի 6-րդ սյունակի «750 000» թիվը փոխարինել «470 000» թվով:

Որոշումն ընդունվեց

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ N 6/11 ՀԱՍՑԵԻ ՇՎԱՔԱՐԱՆՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Ք.Մկրտչյան, Ա.Գրիգորյան, Ա.Առաքելյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ռիժկովի փողոց N 6/11 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07112018-08-0003) 91,87 (իննսունմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ շվաքարանը և դրա կառուցապատման ու

սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0,011687 (զրո ամբողջ տասնմեկ հազար վեց հարյուր ութսունյոթ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0752-0093) մրցույթով՝ 20 (քսան) տարի ժամկետով, տրամադրել վարձակալության՝ բացօթյա սրճարան կազմակերպելու նպատակով:

2. Մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել տարեկան՝ 580.000 (հինգ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 68/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 68/7 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23102018-08-0027) բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ 0,24166 (զրո ամբողջ քսանչորս հազար հարյուր վաթսունվեց հազարհարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 08-001-0117-0016) (այսուհետ՝ հողամաս) մրցույթով, վարձակալության իրավունքով, 3 (երեք) տարի ժամկետով, տրամադրել օգտագործման՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով՝ 08-001-0117-0016-001 կադաստրային ծածկագրով 25,14 (քսանհինգ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ այգետնակը ապամոնտաժելու պայմանով:
2. Հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 70.000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 4 (Լ.Բարսեղյան, Ք.Մկրտչյան, Ա.Գրիգորյան, Ա.Վարդանյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով, կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

18. ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՇԱԲՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության սեփականություն Գյումրի համայնքի վարչական տարածքում 2002-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Լինսի, «Ջոն և Կարեն Հանթսման», «Հայաստան» համահայկական հիմնադրամների և Ամերիկյան Կարմիր խաչի միջոցներով Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի սեփականություն հանդիսացող բնակարանները, ինչպես նաև այդ բազմաբնակարան շենքերի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի ու ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակտնտեսության և համատիրությունների համակարգման բաժնին՝ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և նվիրաբերության պայմանագրի կնքումը:
3. Պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Որոշումն ընդունվեց

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 9 (ԻՆԸ) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՇԱԲՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն սոցիալական բնակարանների բաշխման գործընթացի կազմակերպմանը և իրականացմանը:
2. Սահմանել, որ՝
   1) սոցիալական բնակարանների բաշխման գործընթացը կազմակերպում և իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով ձևավորված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով),
   2) հանձնաժողովը շահառուներին սոցիալական բնակարանների բաշխումը իրականացնում է՝ առաջնորդվելով սահմանված չափորոշիչներով՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ Ք. ՄԿՐՏՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ Ք. ՄԿՐՏՉՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 2 (Ս.Բալասանյան, Կ.Թաթարյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՈՒՄԱՅՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ համայնքի ղեկավարի ներկայացրած տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ինգա Էդուարդի Ավագյանի թեկնածությանը (ծնված՝ 1976 թվականի հունիսի 07-ին, նույնականացման քարտ՝ 007897143, տրված՝ 2015 թվականի հուլիսի 08-ին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու 4 թղմ. 5 մկրշ. շ.2, բն.21, ՀԾՀ՝ 5714760409):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 11-ը, ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Մ. Սահակյան _____

Վ.Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ.Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ք.Մկրտչյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Վարդանյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Ա.Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՎԱՀԱԳՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» նոյեմբերի 2018թ.